



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2023 թվականի N 309 - Ա

**«ԱԶՆԻՎ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՐՆԻԾՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՌԼԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՈՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիժորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Առլենա Պետրոսյանի և Սոնա Մկրտչյանի դիմումները՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Առլենա Պետրոսյանին 2023 թվականի օգոստոսի 29-ից ազատել «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիժորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

2. 2023 թվականի օգոստոսի 29-ից «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիժորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Սոնա Մկրտչյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. օգոստոսի 28
ք. Կապան

